«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունիսի 2018 թվականի

«Ուսանողության և աշխատողների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքների ընթացքը Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողության և աշխատողների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքների ընթացքը Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում»** հարցը (զեկուցող՝ ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս.Խաչատրյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. մարզաառողջարանում կատարվել են որոշակի վերանորոգման, վերականգնողական և բարեկարգման աշխատանքներ: Ձեռք են բերվել անհրաժեշտ հիգիենայի պարագաներ, ընթացիկ նորոգման են ենթարկվել մի քանի սենյակներ, բարեկարգվել է մարզաառողջարանի արտաքին լուսավորությունը, կարգի են բերվել լողասենյակների հատվածները, հիմնովին վերանորոգվել են որոշ ջրագծեր և կոյուղագծեր: Մշակվել են մարզական և մշակութային, ինչպես նաև զբոսաշրջային արշավներ կազմակերպելու ծրագրեր: Մարզաառողջարանը լիովին պատրաստ է հանգստացողներին ընդունելու համար: Ուղեգրերը վաճառվում են:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Խաչատրյանին՝
   1) մարզաառողջարանի գործունեության ամբողջ ընթացքում պատշաճ հսկողություն սահմանել իրականացվող աշխատանքների կատարման նկատմամբ.
   2) անվճար ուղեգրերի հավակնորդների ընտրության համար ստեղծել հանձնաժողով և առանձին շահառուների միջև տեղերը տեղաբաշխել հետևյալ կերպ՝

- պրոֆեսորադասախոսական կազմին՝ 10 (տասը) ուղեգիր,
- ուսումնաօժանդակ և վարչական կազմին՝ 10 (տասը) ուղեգիր,
- Արցախի պետական համալսարանի ուսանողներին՝ 20 (քսան) ուղեգիր (յուրաքանչյուր հերթափոխում՝ 5 (հինգ) ուղեգիր),
- հասարակական ակտիվություն ցուցաբերած, բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ 25 (քսան) ուղեգիր,
- սոցիալապես անապահով և կարիքավոր ուսանողներին՝ 25 (քսանհինգ) ուղեգիր,
- գերազանց և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ 10 (տասը) ուղեգիր,
- ֆինանսատնտեսագիտական քոլեջի ուսանողներին՝ 10 (տասը) ուղեգիր:

2. Մարզաառողջարանի պետ Հ.Կյոկչյանին և պարետ Մ.Ալիխանյանին՝ հետևել մարզաառողջարանի ներքին կարգուկանոնին, ապահովել բնականոն համակեցության պայմաններ, կազմակերպել մարզական և մշակութային միջոցառումներ ու զբոսաշրջային արշավներ՝ մշակված պլան-գրաֆիկներին համապատասխան:

3. Հաշվապահական հաշվառման բաժնի պետ Է.Ադամյանին՝ հետևել ճամբարի ֆինանսական գործունեությանը և անհրաժեշտ օգնություն ցուցաբերել մարզաառողջարանի ղեկավարությանը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր Ս.Խաչատրյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

2018 թ. Հունիսի 29
Երևան